

N ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-16-4
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

« »

2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ. Իզիթյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՆԵՔՍԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մարկոսյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 06.04.2026թ-ին կնքված «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-16-4» ծածկագրով գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-16-4» ծածկագրով պայմանագրի 3.1 կետով 52 800 (հիսունեկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ վճարումը, որը «Գնորդ»-ի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ԳՆՈՐԴ»

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130

ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Հ/Հ 900011042471

ՀՎՀՀ 02882913

հեռ. 010 59-67-89

Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

«ՎԱՃԱՌՈՂ»

«ՆԵՔՍԹ» ՍՊԸ

Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 33/40

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1570098061400100

ՀՎՀՀ 04451646

Հեռ: +374 55 999 229

Էլ. Փոստ: armnextllc@gmail.com

/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող/
(ստորագրություն)

Գ. Մարկոսյան
/«ՆԵՔՍԹ» ՍՊԸ տնօրեն/
(ստորագրություն)

